ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ (ՀԵՐԹԱԿԱՆ 23-ՐԴ)

07.02.2024թ. ժ. 10:30 Էկոնոմիկայի նախարարության կոլեգիայի դահլիճ

Խորհրդի անդամներ

1.	Արամ Խաչատրյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ
2.	Լուսինե Մնացականյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
3.	Էլինա Մարկարյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
4.	Հայկազ Ֆանյան	«Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ
5.	Կարեն Զաքարյան	«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
6.	Սարգիս Ասատրյանց	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
7.	Նիկա Մանուկովա	«Համաշխարհային ազատ տնտեսական գոտիների կազմակերպություն» ոչ առևտրային ասոցիացիա

8.	Գոհար Գալյան	«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի ներդրողների աջակցման և հետներդրումային սպասարկման վարչության պետ

Հրավիրված անձինք

11.	Լուսինե Սարգսյան	Երևանում Բրիտանիայի դեսպանատուն
12.	Արման Պողոսյան	Ֆինանսների նախարարի տեղակալ
12.	Լեոնիկ Հարությունյան	ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ
13.	Արսեն Սառիկյան	ՊԵԿ զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության պետ
14.	Արման Մնացականյան	ՊԵԿ իրավաբանական վարչության պետ
15	Արման Պողոսյան	Ֆինանսների նախարարի տեղակալ
17	Մելանիա Կարապետյան	Էկոնոմիկայի նախարարության Սննդամթերքի անվտանգության վարչություն, վարչության պետ
18.	Մարգարիտա Զալիբեկյան	Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ

Քարտուղարության անդամներ

18.	Հովսեփ Պատվականյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ղեկավար

19.	Հայկ Մալխասյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու
20.	Դավիթ Աղաջանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ
21.	Ռուբեն Սարուխանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի տնտեսագետ,

Նիստի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկավ Ենթախորհրդի նախագահ՝ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը, այնուհետև խոսքը փոխանցվեց Հայաստանի ներդրումային խորհրդի նախագահ Հովսեփ Պատվականյանին, ով ներկայացրեց օրակարգի վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես նշելով, որ դրանք երեքն են՝

Հարց 1. Արտադրանքի որակի բարելավման աջակցության միջոցառում,

Հարց 2. Արտադրանքի փորձաքննության աջակցության միջոցառում,

Հարց 3. ՀՀ ՊԵԿ կողմից շրջանառված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

Հարց 1. Համաշխարհային ազատ տնտեսական գոտիների կազմակերպությունների տարածաշրջանային տնօրեն Նիկա Մանուկովան ներկայացրեց հարցի լուծման նպատակով ներկայացված առաջարկությունը: Վերջինս ներկայացրեց, առաջարկությունը ուղղված է լուծելու 3 հարց: Առաջինը՝ դա «Արտադրված է Հայաստանում» բրենդի զարգացումն է, այսինքն՝ հայկական ծագման ապրանքների և ծառայությունների որակի բարձրացումը, երկրորդը՝ ներմուծվող ապրանքները տեղականով փոխարինելը խթանելը և երրորդը՝ հայկական ապրանքների և ծառայությունների արտահանման ավելացումն է: Տիկին

Մանուկովան ներկայացրեց, որ նշվածի մասով ուսումնասիրություն է կատարվել և համաձայն վերջինիս, հիմնական խոչընդոտներից առաջինը դա լոգիստիկ, իսկ երկրորդը տեղական ապրանքների և ծառայությունների որակի համապատասխանության հարցն է թե տեղական և թե միջազգային շուկաներում: Այս տեսանկյունից կարևորվում է որակի կառավարման համակարգերի ներդրման սուբսիդավորման հարցը: Համաձայն տիկին Մանուկովայի, սուբսիդավորումը առաջարկվում է իրականացնել 2՝ մեկը կառավարման համակարգերի ներդրման, մյուսը սերտիֆիկացման ուղղություններով: Առանձնացվել են մի քանի ստանդարտներ՝ ISO 9001-ը, որը կարելի է ասել հիմնաքարն է բոլոր միջազգային ստանդարտների, տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգերի ISO 27000-ը, սննդամթերքի անվտանգության ISO 22000՝ 30%, ISO 14001 և FSSC 22000, «օրգանական», «բիո» և «վայրի հավաք» ստանդարտները, ագրոստանդարտ Global G.A.P.-ը: Քանի որ այս ստանդարտների բլոկը կազմված է 3 բլոկից, մեկը ենթակառուցվածքների ներդրումն է, երկրորդը խորհրդատվական ծառայությունների տրամադրումն է և երրորդը սերտիֆիկացումը: Ընդ որում, մեկ անուն արտադրանքի համար հաճախ անհրաժեշտ է մի քանի տեսակի փորձաքննություն, որոնց գներն էապես տարբերվում են՝ կապված բարդության աստիճանից:

Չնայած Հայաստանում առկա է միջազգայնորեն հավատարմագրված 3 լաբորատորիա, վերջիններս ոչ բոլոր լաբորատոր փորձաքննություններն են իրականացնում և հաճախ անհրաժեշտություն է առաջանում դիմելու օտարերկրյա լաբորատորիաների ծառայությանը:

Դրանց գները հաճախ ավելի բարձր են: Որոշ դեպքերում, արտահանվող ապրանքների դեպքում, ներմուծող երկրի կամ ընկերության պահանջով, որպես հիմք են ընդունվում միայն տվյալ երկրի լաբորատորիաների փորձաքննության արդյունքները: Տիկին Մանուկովան տեղեկացրեց, որ կանխատեսումներ են արվել, համաձայն որի հավաստագրերի համար դիմելու ամենամեծ կշիռը կունենա ISO 9001՝ 40%, այնուհետև ISO 22000՝ 30%, ISO 14001՝ 10%, «օրգանական», «բիո» և «վայրի հավաք» հավաստագրերի դեպքում՝ 10%, FSSC 22000՝ 5%, Global G.A.P.՝ 5%: Հարցի վերաբերյալ որոշ պարզաբանումներ ներկայացրեց ՀՆԽ-ի

տնտեսագետ Ռուբեն Սարուխանյանը, ով ևս հաստատեց բիզնեսի կողմից դեպի միջազգային շուկաներ մեծածավալ արտահանման համար դիտարկվող խնդիրների առկայությունը: Նախագծով նախատեսված փոխհատուցման առավելագույն շեմերի կիրառման դեպքում պետական բյուջեից կատարվող ծախսերը ծրագրի գործողության ընթացքում (3 տարում) կկազմեն 1.455.000.000 դրամ:

Առաջարկվում է մասնակի փոխհատուցել ՀՀ-ում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող այն առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից կատարված հավաստագրման և (կամ) խորհրդատուի ծառայության ծախսերը, որոնց շրջանառության առնվազն 80%-ը ձևավորվել է ՏԳՏԴ-ի «A (ԷՅ) Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն» բաժնի 01.1 (Ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցում), 01.2 (Բազմամյա մշակաբույսերի աճեցում), 01.3 (Տնկիների և այլ տնկանյութերի աճեցում), 01.4 (Անասնաբուծություն) և 03.2 (Ձկնաբուծություն) խմբերում, «C (ՍԻ) Մշակող արդյունաբերություն» բաժնում (բացառությամբ՝ 18 «Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում», 33 «Մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում» հատվածների), «M (ԷՄ) Մասնագիտական, Գիտական և Տեխնիկական Գործունեություն» բաժնի 71.11 «Ճարտարագիտական գործունեություն և դրա հետ կապված տեխնիկական խորհրդատվություններ» դասում ներառված գործունեության տեսակներից: Փոխհատուցումն իրականացվում է հետևյալ չափերով՝

ա. ISO 9001 և ISO 14001 հավաստագրերի դեպքում՝ հավաստագրման ծախսի 100%-ի չափով (բայց ոչ ավելի քան 1.500.000 ՀՀ դրամ) և խորհրդատուի ծառայության դիմաց շահառուի կողմից կատարված վճարումների 50%-ի չափով (բայց ոչ ավելի քան 2.500.000 ՀՀ դրամ),

բ. Global G.A.P., ISO 22000 և FSSC 22000 հավաստագրերի դեպքում՝ հավաստագրման ծախսի 100%-ի չափով (բայց ոչ ավելի քան 3.000.000 ՀՀ դրամ) և խորհրդատուի ծառայության դիմաց շահառուի կողմից կատարված վճարումների 50%-ի չափով (բայց ոչ ավելի 6.000.000 ՀՀ դրամ),

գ. «օրգանական», «բիո» և «վայրի հավաք» հավաստագրերի դեպքում՝ հավաստագրման ծախսի 100%-ի չափով (բայց ոչ ավելի քան 500.000 ՀՀ դրամ):

Հարցի վերաբերյալ որոշ դիտարկումներ արեց ՀՆԽ-ի ղեկավար Հովսեփ Պատվականյանը, ով ներկայացրեց, որ երբ ուսումնասիրում ես ԻՍՕ-երի ազդեցության մասնաբաժինը ամերիկյան և եվրոպական շուկաներ մուտք գործելու վրա, ապա ամերիկյանի մասով բավականին փոքր է՝ եվրոպական շուկա սննդամթերքի մուտք գործելու համար ազդեցության տեսանկյունից: Այս մասով կարելի է ենթադրել, որ այստեղ որոշակի դեր ունի սփյուռքի ազդեցությունը:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

Հարց 2. Արտադրանքի փորձաքննության աջակցության միջոցառման հարցը ներկայացվեց ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի տնտեսագետ, ծրագրերի համակարգող՝ Ռուբեն Սարուխանյանի և «Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների կենտրոն» հիմնադրամի տնօրեն՝ Հայկազ Ֆանյանի համազեկուցմամբ: Համաձայն վերջիններիս, գործարարների հետ քննարկումները վկայում են, որ արտադրության ոլորտում ներգրավված փոքր և միջին ընկերությունները արագ աճի և միջազգային շուկաներ դուրս գալու սկզբնական փուլում բախվում են արտադրանքի որակի հավաստման նպատակով պարբերական լաբորատոր փորձաքննություններ իրականացնելու հետ կապված ծախսերի խնդրին: Դրանք հաճախ վաճառքի ծավալներին անհամարժեք մեծ են, սակայն կարևոր են արտադրանքի՝ անվտանգության նվազագույն չափանիշներին համապատասխանության, իսկ որոշ դեպքերում՝ բարձր որակն ու մրցունակությունն ապացուցելու երաշխիք են: Ընդ որում, մեկ անուն արտադրանքի համար հաճախ անհրաժեշտ է մի քանի տեսակի փորձաքննություն, որոնց գներն էապես տարբերվում են՝ կապված բարդության աստիճանից:

Չնայած Հայաստանում առկա է միջազգայնորեն հավատարմագրված 3 լաբորատորիա, վերջիններս ոչ բոլոր լաբորատոր փորձաքննություններն են իրականացնում և հաճախ

անհրաժեշտություն է առաջանում դիմելու արտասահմանյան լաբորատորիաների ծառայությանը: Դրանց գները հաճախ ավելի բարձր են: Որոշ դեպքերում, արտահանվող ապրանքների դեպքում, ներմուծող երկրի կամ ընկերության պահանջով, որպես հիմք են ընդունվում միայն տվյալ երկրի լաբորատորիաների փորձաքննության արդյունքները:

Առաջարկվում է մասնակի փոխհատուցել ՀՀ-ում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող (տարեկան 100-500 մլն. դրամ շրջանառություն և մինչև 50 աշխատող ունեցող) այն առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից կատարված արտադրանքի լաբորատոր փորձաքննության ծախսերը, որոնց դիմումի ներկայացման օրվան նախորդող տարվա ընթացքում շրջանառության առնվազն 80%-ը ձևավորվել է ՏԳՏԴ-ի «A (ԷՅ) Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն» (բացառությամբ՝ 01.7 «Որսորդություն, վայրի կենդանիների որսում որոգայթներով և ծառայությունների մատուցում այդ բնագավառում», 02 «Անտառային տնտեսություն և փայտամթերումներ», 03.1 «Ձկնորսություն» խմբերի), «C (ՍԻ) Մշակող արդյունաբերություն» բաժնում (բացառությամբ՝ 18 «Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում», 33 «Մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում» հատվածների) և «M (ԷՄ) Մասնագիտական, Գիտական և Տեխնիկական Գործունեություն» բաժնի 71.11 «Ճարտարագիտական գործունեություն և դրա հետ կապված տեխնիկական խորհրդատվություններ» դասում ներառված գործունեության տեսակներից:

ՈՐՈՇՎԵՑ՝

Հարց 1-ի և հարց 2-ի հետ կապված դիտարկումներ ներկայացրեցին Էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության վարչության պետ Մելանյանը Կարապետյանը, ով առաջարկեց նախագծում, որպես թիրախային խումբ դիտարկել հանրային սննդի փոքր կաազմակերպություններին ևս, ենթախորհրդի մի շարք անդամներ, ինչպես նաև Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը: Պարոն Գևորգյանի առաջարկությամբ որոշվեց դիտարկվող աջակցության գործիքակազմը դիտարկել մշակվող՝

ՓՄՁ զարգացման և Արտահանման նոր ռազմավարությունների միջոցառումների շրջանակում:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

Հարց 3. ՀՀ ՊԵԿ կողմից շրջանառված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:ՊԵԿ Իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանի և Զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության պետ Արսեն Սառիկյանի համազեկուցմամբ ներկայացվեց նախագծի կարգավորման առարկան: Պարոն Մնացականյանը նշեց, որ նախագծի նախագծով նախատեսվում է հստակեցնել նաև մաքսային և հարկային մարմինների քննությանը ենթակա գործերի շրջանակը:

Պարոն Մնացականյանը ներկայացրեց կարգավորման առարկայի հետ կապված թվային տվյալներ, նշելով, որ հարկ վճարողների կողմից սխալ ներկայացված տվյալները մեծ խնդիրներ են ստեղծում տվյալների բազայի ամբողջականության և հավաստիության տեսանկյունից: Նախկինում տնտեսվարողները թղթային եղանակով առձեռն էին ներկայացնում հարկային մարմին ֆինանսական հաշվետվությունները: Ժամանակի զարգացման հետ համահունչ ՊԵԿ-ը գնաց փոփոխությունների, որ այդ հաշվետվությունների ներկայացման պահանջը վերացվեց և այն տեղեկատվությունը, որի տրամադրումը ՊԵԿ-ին անհրաժեշտ էր վերլուծությունների և հարկային վարչարարության համար՝ տեղափոխվեց շահութահարկի հաշվետվության մեջ: Հարցին անդրադարձավ նաև ՊԵԿ զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության պետ Արսեն Սարիկյանը, ով վերահաստատեց պարոն Մնացականյանի կողմից ներկայացվածը, հավելելով, որ զուտ հաշվարկի տրամաբանությունից ելնելով նախագիծը հարկեր չի առաջացնում, սակայն այդ տեղեկատվությունը պետք է, ընդհանուր առմամբ հարկային կարգապահությունը, նաև ավելի գլոբալ իմաստով հարկային ճեղքը գնահատելու համար: Պարոն Սառիկյանը համաձայնվելով պարոն Մնացականյանի հետ, ևս մեկ անգամ նշեց, որ դիտարկվող մասով գործ ունենք

շահութահարկի հաշվետվության հետ, որը հիմնականում վերաբերում է ընդհանուր հարկման դաշտում գործունեություն իրականացնողներին, իսկ միկրոձեռնարկության և շրջանառության հարկման դաշտում աշխատողները շահութահարկի հաշվետվություն չեն ներկայացնում և հետևաբար ՓՄՁ-երը այս մասով խնդիր չեն կարող ունենալ: Բացի այդ օրենսդրական փոփոխությամբ ոչ հարկային և ոչ էլ վարչարարական բեռի ավելացում է նախատեսվում, այն ուղղակի միտված է կարգապահությունը բարելավելուն: Միջազգային գործընկերների հետ քննարկումների հետ ժամանակ ՊԵԿ-Ը նույն առաջարկություններ է ստանում, որ եթե կա տեղեկատվության անհրաժեշտության պահանջ, ապա դա պետք է սահմանված լինի համապատասխան իրավական ակտով, ինչը կա և պետք է սահմանված լինի նաև դրա համար պատասխանատվություն:

Դեռևս 2019 թվականին փոփոխություն կատարվեց «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքում, մասնավորապես «169.2-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ հարկային մարմին ներկայացվող վիճակագրական տեղեկատվության մասով,» վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի մասով պատասխանատվություն կիրառող մարմին ճանաչվեց հարկային մարմինը: Այդ փոփոխությունը ևս ուներ կանխարգելիչ բնույթ, քանի որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.2 հոդվածը նախատեսում էր հարկ վճարողի կողմից սխալ ներկայացված տեղեկատվության համար առաջին անգամ կիրառել նախազգուշացում: Հարկային մարմնի նպատակը հարկ վճարողներին տուգանելը չէ, այլ հակառակը՝ սխալ ներկայացված հաշվարկների ճշգրտման հարցում նրանց օժանդակելն է, որը կհանգեցնի առավել ճշգրիտ տեղեկատվության հավաքագրմանը:

Հարցի շուրջ տեսակետներ հայտնեցին Հայկազ Ֆանյանը, Դավիթ Աղաջանյանը, մասնավորապես, նշելով, որ հաշվի առնելով պրակտիկան նամանավանդ նախատեսվող տուգանքները վերջիններիս համար այնքան էլ մեծ չեն և խոշոր ընկերությունները կարող են չտալ պահանջվող տեղեկատվությունը նախընտրել մուծել: Նշվածի մասով պարոն Սառիկյանը

տեղեկացրեց, որ ցանկացած նմանատիպ կարգավորում պետք է դիտարկել վերահսկողական ամբողջ գործիքակազմի համատեքստում և դրանց կիրառումը ինքնանպատակ չի և առաջին հերթին ուղղված է հարկային կարգապահության մշակույթի ձև ներկայացուցիչ Լուսինե Մնացականյանը: Վերջինիս շեշտադրեց հարկային վարչարարության նպատակով պահանջվող տեղեկատվության ծավալի նվազագույնի հասցնելու կարևորությունը բիզնեսի համար, քանի որ յուրաքանչյուր նոր կարգավորմամբ պահանջվող հավելյալ տեղեկատվության հավաքագրումը և ներկայացումը ենթադրում է թե վարչական, և թե ֆինանսական ծանրաբեռնվածություն բիզնեսի համար: Բացի այդ տիկին Մնացականյանը խնդրեց պարզաբանել, արդյոք նախագիծը բացառում է նույն խախտման համար նախագծի տարբեր հոդվածներով սահմանված խախտումների դեպքում կրկնակի տույժի կիրառումը և եթե չի բացառում, գուցե պետք է որոշակի փոփոխություն կատարել այս մասով: Հարցադրումներ ներկայացրեց նաև «Ամերիկայի պալատը Հայաստանում» ՎԶԵԲ կողմից ֆինանսավորվող ՀՆԽ-ի ղեկավար Հովսեփ Պատվականյանը, խնդրեց պարզաբանել, որպես նախագծի տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող թիրախային խմբի վերաբերյալ, ինչի առնչությամբ պարոն Սառիկյանը նշեց, որ նախագծով ներմուծվող կարգավորումները ուղղված են շահութահարկ վճարողների հարկային կարգապահության բարձրացմանը, այսինքն՝ որպես վերջինիս թիրախային խումբ դիտարկվում են գործող խոշոր կամ միջին հանդիսացող կազմակերպություններն, այսինքն ՓՄՁ-երի վրա ազդեցության տեսանկյունից այն չպիտի դիտարկվի: Հարցադրմանը արձագանքեց պարոն Մնացականյանը՝ համաձայնվելով տիկին Մնացականյանի հետ, վերջինս նշեց, որ ոլորտի առաջադեմ փորձի համաձայն, այո պետք է տնտեսվարողներից պահանջել հնարավորինս նվազագույն, հարկային վարչարարության տեսանկյունից միմիայն անհրաժեշտ տեղեկատվություն: Այս առումով ՊԵԿ-ը առաջնորդվում է հենց այս սկզբունքով: Ինչ վերաբերում է միևնույն խախտման մասով պատժի կիրառմանը, ապա այս մասը արդեն իսկ նախատեսված է «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքով և եթե անձը կատարել է մի քանի վարչական իրավախախտումներ, տույժը նշանակվում է առավել լուրջ խախտման համար սահմանված սանկցիայի շրջանակներում:

Պարոն Մնացականյանը նաև նշեց, որ չնայած նշված հանգամանքին, եթե կա նման պահանջ, ՊԵԿ-ը պատրաստակամ է քննարկել ցանկացած առաջարկություն:

Նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյան, ի լրումն արդեն ներկայացվածի, տեղեկացրեց, որ խնդիրը կարգավորման ներդրում չէ: Բիզնեսի հիմնական մտավախությունը այն է, որ կարգավորման ներդրման դեպքում այնպես չստացվի, որ ոչ բարեխիղճ վարք դրսևորած տնտեսվարողները շարունակեն իրենց վարքագիծը և որևէ բան չփոխվի նախագծով ակնկալվող մասով: Ամփոփելով պարոն Գևորգյանը հավելեց, որ հարցի վերաբերյալ հիմնական դիտարկումը այն է, որ պետք է այնպես անել, որ կարգապահությունը լինի հնարավորինս բարձր մակարդակի վրա ու նվազագույնի հասցնել կարգապահ չլինելու հնարավորությունները: Պետք է փորձել ստեղծել այնպիսի համակարգ, այդ թվում օգտագործելով թվայնացման գործիքները, որը սխալվելու կամ չլրացնելու հնարավորություն չտրվի:

Դիտարկումներ ներկայացրեց նաև Ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանը: Նախագիծը մշակված և բոլոր շահագրգիռների հետ քննարկված է եղել: Վերջիններս կողմ են եղել տուգանքները բարձրացնելու առաջարկության հետ: Զուտ տեխնիկապես նախագիծը դիտարկվում է Արդարադատության նախարարության կողմից մշակված «Վարչական իրավախախտումների» օրենքի փոփոխության նախագծային առաջարկի հետ: Այս համատեքստում նախագծի քննարկումը դանդաղ է ընթանում և ՊԵԿ-ը հնարավոր է նախագիծը նորից առաջացնի և այդ ֆորմատով նախագծի առաջադրումը, որպեսզի ՊԵԿ վարչարարական ջանքը իմաստավորվի: ՊԵԿ-ը երեք տարվա կտրվածքով մոնիտորինգ է արել, սակայն արդյունքները ոգևորիչ չեն՝ հարկային կարգապահության վարքագծի փոփոխման տեսանկյունից: Օրինակ անգամ արդյունաբերության ոլորտում գործող խոշոր կազմակերպությունները չեն հրապարակել իրենց ֆինանսական հաշվետվությունները, ինչը բացասաբար է անդրադառնում միջազգային վարկանիշի վրա: Ներկայիս կարգավորումները կարգապահության չեն մղում: Վերահաստատելով պարոն Սառիկյանի

տեսակետը, Պարոն Պողոսյանը նշեց, որ նախագծի նպատակն է շահութահարկ վճարողներ խոշոր կազմակերպությունների հարկային կարգապահության բարձրացմանը:

ՈՐՈՇՎԵՑ՝

Նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը՝ ամփոփելով քննարկման արդյունքները, առաջարկեց արձանագրել, որ նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ առկա չեն:

Նիստը նախագահող

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ

_____

(ստորագրություն)

Արձանագրությունը կազմեց՝

ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ

ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ